ՂՐԻՄԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐԸ

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Սուրբ Խաչը ղրիմահայոց գաղութի ամենանշանավոր հոգևոր կենտրոնն էր, հայկական մշակույթի փառավոր վկան, որ դարեր շարունակ, համարյա անընդհատ, եղել է այստեղի հայ առաքելական եկեղեցու աթոռանիստը։ Վանքը գտնվում է Ղրիմի լեռների անտառապատ լանջերից մեկի վրա, Ստարի Ղրիմ քաղաքից 3 կմ հարավ-արևելք։ Ի դեպ, այս քաղաքի միջնադարյան «Սուրխաթ» անվանումը մի խումբ ուսումնասիրողների (Վ. Սմիրնով, Օ. Ակչոկրակլի, Հ. Սուրխաթյան, Ա. Յակոբսոն և այլք) կողմից ներկայացվում է որպես «Սուրբ Խաչի» աղավաղված ձև[1]։ Լեռը, որի լանջին գտնվում է վանքը, ինչպես նաև այդ լեռան ստորոտով հոսող գետակը, ժամանակին նույնպես Սուրբ Խաչ անունն են կրել և վերանվանվել են միայն հետագայում, այս վայրերում թաթարների ամրանալուց հետո։ Նախկինում վանքի հարևանությամբ էր անցնում դեպի առափնյա բնակավայրերը ձգվող առևտրական բանուկ ճանապարհը։ Վ. Տուրի հավաստմամբ, մինչև օրս էլ դեռ նկատվում են մերձափնյա Շչեբետովկա (Նախկինում՝ Օթուզ) գյուղի մոտ գտնվող Ղզլթաշի վանքը Սուրբ Խաչի հետ կապող միջնադարյան ճանապարհի հետքերը[3]։

Թե կոնկրետ երբ և ում կողմից է հիմնադրվել վանքը՝ հայտնի չէ։ Սուրբ Խաչի պահպանված ամենավաղ հիշատակությունը վերաբերում է 1347 թ.։ Այդ թվին գրված ղրիմյան մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Ի թվ. Հայոց ՉՂԶ. *(1347)* կատարեցաւ սուրբ մատեանս՝ աստուածախաւս յաշխարհիս Հոնաց, որ այժմ Ղրիմ ասի. ի մեծ եւ ի հռչակաւոր քաղաքս Սուրխաթ կոչեցեալ ի ճողետեներս վերի, առ ոտն սուրբ խաչին...»[4]։

Մ. Բժշկյանի «Ճանապարհորդության...» մեջ, Սուրբ Խաչ վանքին նվիրված հատվածում հանդիպում ենք այսպիսի տողերի. «Ի միջավայրին գոն կրկին մարմարինեայ գերեզմանք առանց գրոյ, փորագրեալ միայն ճգնաւորական գաւազանս։ Պատմի ի յայսմաւուրս եկեղեցւոյն Մաճառի. թէ սոքա երկու եղբարք կրօնաւորք Յովհաննէս եւ Գէորգ եղեն պատճառ շինութեան վանացս»[5]։ Համալիրի գլխավոր կառույցի՝ Սուրբ Նշան եկեղեցու թմբուկի քիվատակին

---

1 В. Д. Смирнов. Археологическая экскурсия в Крым летом 1886 года.— Записки Восточного отдела Императорского русского археологического общества. Т. 1. вып. 4. с. 287; О. Акчокраклы. Старокрымские и Отузские надписи XIII—XIV вв.—Известия Таврического общества истории, археологии и этнографии. Т. 1. Симферополь. 1927. с. 7; *Հ. Սուրխաթյան. Ղրիմի հայոց վանքը.—«Մուրճ», № 6, 1904, էջ 71*; А. Л. Якобсон. Армянская средневековая архитектура в Крыму.—Византийский временник. № VIII. 1956. с. 168; А. Л. Якобсон. Ю. А. Таманян. Армянская архитектура Крыма. Ереван, 1992. с. 8.

2 *Մ. Բժշկյան. Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց..., Վենետիկ, 1830, էջ 328։*

3 В. Тур. Крымские православные монастыри XIX—начала XX века (История. Правовое положение.). Симферополь, 1998, с. 98.

4 *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 358։*

5 *Մ. Բժշկյան. Նշվ. աշխ., էջ 325.*

ճոխ ծաղկագրով փորագրված արձանագրությունից տեղեկանում ենք, որ վերջինիս կառուցումը սկսվել է 1358 թ. Հովհաննես կրոնավորի, նրա հարազատ եղբայրների և հոգևոր աշակերտների օժանդակությամբ.

ՓԱՌԱՑ ՏԱՃԱՐՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ,
ԵՐԿՐԻ ԴՐԱԽՏ ԿԵՆԱՑ ՓԱՅՏԻՆ,
ՈՐ Է ՊԱՏԿԵՐ ԵՐԿՆԻՑ ՎԵՐԻՆ
ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱԼՆ ԿԱՅԻԱՆԻՆ,
Ի ԾՆՆԴԵՆԷ ՄԱՐՄՆՈՎ ՓՐԿԻՉԻՆ
ՅԵՐԵՔ ՀԱՐԻԻՐ ԵՒ ՀԱԶԱՐԻՆ
ՅՈԻԹ ԵՒ ՅԻՍՈԻՆ ՍԿՍԵԱԼ ԱՄԻՆ (1358—Տ. Ս.)*
ԿԱՆԳՆԵԱԼ ՅԱՆՈԻՆ ՍՈԻՐԲ ՆՇԱՆԻՆ
ՍԱՏԱՐՈԻԹԵԱՄԲ ԻԻՐ ԾԱՌԱՅԻՆ
ՅՈՎԱՆՆԻՍԻ ԿՐԱԻՆԱԻՈՐԻՆ
ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԵՂԲԱՐՑ ՆՈՐԻՆ
ԵՒ ԸՍՏ ՈԳԻՈՑ ՈՐԴՈՑ ԲՆԱԻԻՆ[6]։

XVII դարի ճանաչված ղրիմահայ տաղերգու, գրիչ, ուսուցիչ Ստեփանոս Թոխաթեցին իր 1607 թ. գրված հիշատակարանում ասում է, թե Սուրբ Նշանը, ինչպես նաև Կաֆայի (Թեոդոսիա) Սուրբ Օքսենտ և Սուրբ Քառասունք եկեղեցիները կառուցել է Հովհաննես Սեբաստացին իր եղբայրների՝ պարոն Հակոբի և Ղազարոս գրամարտիկի աջակցությամբ[7]։ Թոխաթեցին այս տեղեկությունը վերցրել է հին հիշատակարանից։

XIV դարի երկրորդ կեսին Կաֆայում և Սուրխաթում գրված հայկական ձեռագրերի հիշատակարանները գովերգում ու փառաբանում են ղրիմահայ գաղութի այդ ժամանակահատվածի հոգևոր առաջնորդ Հովհաննես կրոնավորին կամ Հովհաննես Սեբաստացուն։ Ժամանակակիցները որակում են նրան որպես «կորովամիտ եւ ուղղափառ հռետոր», «յոյժ հմուտ աստուածաշունչ մատենից», «իմաստուն են խոհեմական», «հերձուածողաց հալածող, ցոփացնացից ահ արկանող, զոր այժմ փայլէ իր մէջ եկեղեցւոյ իբրեւ զսին լուսոյ եւ իբրեւ զպարիսպ բարձրապատուար շուրջանակի»[8]։ 1368 թ. գրված մի հիշատակարանումականավոր գրիչ և ծաղկող Նատերի որդին՝ գրիչ Ստեփանոսը, մեծագույն պատկառանքով ասում է. «...այրն աստուծոյ, սրբազան եւ առաքինի, վեհիմաստ և ճանճարեղ. կորովամիտ և խոհեմիմաց, սրբասէր կրաւնաւոր քահա-

* Միջնադարի հայ տոմարագետների, պատմաբանների հաշվումներով Քրիստոսի ծնունդը, որից սկիզբ է առնում քրիստոնեական թվարկությունը, տեղի է ունեցել ընդունված 1 թվականից երկու տարի առաջ։ Ղրիմում ընդօրինակված հայկական ձեռագրերի հիշատակարանները վկայում են, որ Սուրբ Նշան տաճարը հիմնադրող Հովհաննես Սեբաստացին և նրա մերձավորները տարեթիվը քրիստոնեական թվականությամբ ներկայացնելիս անսայթաքորեն ռոտվել են 2 տարով շտկված տարբերակից (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 369—370, 434 435, 496—497, 518—519, 504—505 և այլն)։ Հնարավոր է, որ արձանագրության մեջ բերված թվականը (1358) նույնպես ներկայացված է շտկված տարբերակով և համապատասխանում է ներկայիս քրիստոնեական թվականության 1356 թ.։

6 Մ. Բժշկյան. նշվ. աշխ., էջ 324։ Այս հրատարակության մեջ սխալ է վերծանված եկեղեցու կառուցման թվականը։ Արձանագրության յոթերորդ տողը Բժշկյանը ընթերցել է «...ՅՈԻԹ ԵՒ ԵՐԵՍՈԻՆ ՍԿՍԵԱԼ ԱՄԻՆ...» (1338 թիվ)։ Սխալը տարածվել է բազմաթիվ հեղինակների աշխատություններում։ Ճիշտ վերծանված տարբերակը հրատարակվել է միայն 1969 և 1970 թթ. Յու. Թամանյանի և Գր. Գրիգորյանի հոդվածներում, ինչպես նաև 1974 թ. Վ. Ա. Միքայելյանի գրքում (Յ ո ւ. Ա. Թ ա մ ա ն յ ա ն. Ղրիմի Սուրբ Խաչ վանքը.—Էջմիածին, № Է—Ը,1969, էջ ... Гр. Григорян. Новые данные об армянских эпиграфических надписях Крыма и Северного Кавказа.—ՊԲՀ, Երևան, 1970, № 3, էջ 298, В. А. Микаелян. На крымской земле Ереван, 1974, с. 127.

7 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, մաս Ա, կազմեցին Վ. Հակոբյանը և Ա. Հովհաննիսյանը. Երևան, 1970, էջ 253։

8 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 428, 448—449, 461—462, 494։

նայն տէր Յովհաննէս արքեպիսկոպոսի, այցելութեան հիւսիսական աշխարհի, ստացաւ զգիրքս աստուածարեան մարգարէիցն...: Եւ այնչափ ունէր փոյթ յանձն իւր և սէր, և սիրէր յոյժ զբանն աստուծոյ, մինչ զի ոչ տայր քուն աչաց կամ նինջ արտևանաց յընթեռնլոյ զգիրս սուրբս եւ քննելոյ զխորոս խորհրդոցն, որ ծածկեալ են ի նմա»[9]:

Հովհաննես Սեբաստացին, որպես Ղրիմի աթոռակալ առաջնորդ, առաջին անգամ հիշատակվում է 1346 թ. ընդօրինակված երկու ձեռագրերի հիշատակարաններում[10]*: Դրանցից մեկում ասվում է.* «Արդ. գրեցաւ սա յաշխարհիս ի հիւսիսոյ, որ կոչի Խրիմ, ի քաղաքս, որ ասի Սուրխաթ, յաշխարհակալութեանն Ճանիպէկ խանին, ի վերադիտողութեանն տէր Ստեփանոսի, և արքեպիսկոպոսութեանն Յովհաննէս կրաւնաւորի»[11]:

Տեղական հոգևոր այսպիսի պաշտոնները՝ վերադիտող (իսկ ավելի ուշ գրված հիշատակարաններում՝ «եպիսկոպոս ամենայն հիւսիսական կողմանց») և աթոռակալ, վկայում են Ղրիմում և հարակից տարածքներում հայ առաքելական եկեղեցու պաշտոնավարման տեղական, կենտրոնացված համակարգի մասին։ Թե երբ է ստեղծվել այդ համակարգը, դժվար է ասել, բայց որ այն գոյություն է ունեցել մինչև հայության XIV դարի 30—40-ականների մեծ գաղթը Ոսկե Հորդայից Ղրիմ[12]*, կասկածից դուրս է։ Կաֆայի 1316 թ. կանոնադրության մեջ հիշատակվում է ոմն «հայերի եպիսկոպոս», որի ջանքերով Կաֆայում օրմուդ էր անցկացվել*[13]*։*

Ղրիմի աթոռակալ Հովհաննես Սեբաստացու անունը 1370—1372 թթ. հիշատակարաններում արդեն դրվում էր կաթողիկոս Մեսրոպ Ա Արտազեցուց անմիջապես հետո[14] *(նախորդներում հիշատակվում էին սկզբում հայոց հայրապետը, հետո՝ տարածաշրջանի հոգևոր առաջնորդը, այնուհետև՝ վերջինիս երեցփոխանը Ղրիմում)*[15]*, 1374—1375 թթ. հիշատակարաններն նրան արդեն ուղղակի որակում են որպես առաջնորդ «ամենայն հիւսիսական կողմանց», որը միևնույն ժամանակ աթոռակալում էր Ղրիմում*[16]*։ Երևանի Մատենադարանում 7432 համարի տակ պահվում է Ղրիմում ընդօրինակված մի ձեռագիր, որը 1372 թ. Հովհաննես Սեբաստացին նվիրել է Սուրբ Գևորգ տաճարին «ի գաւառս Ղրիմ մայրաքաղաքի»։ Հիշատակարանի վերջում գրված է «հիւսիսական կողմանց աթոռակալ» Հովհաննես կրոնավորի կնիքը*[17]*։ Ավելի ուշ շրջանի (1381—1384 թթ.) ձեռագրերը Սեբաստացուն նորից հիշատակում են որպես միայն Ղրիմի աթոռակալ, իսկ որպես տարածաշրջանի եպիսկոպոս՝ տեր Ստեփանոսին «տղայ հասակաւ»*[18]*։*

Սակայն կրկին անդրադառնանք Սուրբ Նշանի տաճարի կառուցմանը։ 1368 թ. գրված հիշատակարանի հայտնի հատվածում գրիչ Ստեփանոսն ասում է, թե Հովհաննես աթոռակալն «ուսանէր եւ ուսուցանէր ոչ միայն բանիւ, այլ եւ արդեամբք ի գործ բերեալ արձանագրութիւնս ռուսեայսն, ի

9 Նույն տեղում, էջ 485—486։

10 Նույն տեղում, էջ 347—348 և 349։

11 Նույն տեղում, էջ 348։

12 Վ. Ա. Միքայելյան. Ղրիմի հայկական գաղութի պատմություն. Երևան, 1964, էջ 73—80։ Տե՛ս նաև՝ Մատենադարան, ձեռ. 7442, թ. 281։

13 Հայ-իտալական առնչություններ։ Ջենովական աղբյուրները ղրիմահայերի մասին։ Կազմեց, նախաբանը և ծանոթագրությունները գրեց Վ. Միքայելյանը. Երևան, 1974, էջ 28, Վ. Ա. Միքայելյան. Ղրիմահայոց պատմություն. Երևան, 1989, էջ 17։ Հեղինակը հիմնվում է «Monumenta historial patriae», Impozitio officii Gazariae, t. 2, 1838, p. 407—408 *տվյալների վրա։*

14 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 494, 496։

15 Նույն տեղում, էջ 428, 461—462։

16 Նույն տեղում, էջ 513—514, 518—519, 538—539։

17 Նույն տեղում, էջ 504—505։

18 Նույն տեղում, էջ 548։

գրելոց սրբոց», այնուհետև շարունակում է. «...Յորում և ընդ բազում արդիւնարարութիւնսն զոր ստեղծ, արմատացուցեալ կանգնեաց ի վանս իւր և տաճար երկնաձման գեղապանոյն. կամարաձև, գմբեթայարկ, սրբազործ վիմաւք, ոսկեզարդ գեղազանութեամբ. տեղի անտանելոյն և ի հանգիստ անախտ կամագն աստուծոյ և գենարան զարդինն անմահի. անուանելով զնա Սուրբ Նշան. հինգ խորանաւք, ինն աստիճանաւք յաւրինակ վերնոյն Սիոնի...»[19]. Եվ այսպես, սույն հիշատակարանը վերջնականապես հաստատում է, որ Մ. Բժշկյանի հիշատակած և արձանագրության մեջ նշված Հովհաննես կոնամորը եղել է իրական պատմական անձնավորություն՝ նույն ինքը դրիմահայության հոգևոր առաջնորդ Հովհաննես Սեբաստացին, որն իր ապրանայության միջոցին կառուցել է Սուրբ Խաչ վանքի Սուրբ Նշան տաճարը։ Ինչպես տեսնում ենք, Հովհաննես կոնամորը տաճարը կառուցել է «ի վանս իւր», այսինքն իր վանքում։ Նշանակում է մինչև տաճարի կառուցումը վանքն արդեն եղել է։ Այս հանգամանքը հաստատում է նաև դրիմյան ձեռագրերում Սուրբ Խաչը դեռևս 1347 և 1348 թթ. հիշատակող գրանումների գոյությունը (այն ոեպրում, երբ տաճարի կառուցումը սկսվել է միայն 1358 թ.), ինչպես նաև Գ. Սպասսկու այն տեղեկությունը, թե հայերն հոենը վանքի հիմնադրումը վերագրել են 1283 թ.[20]։ Մերձակա բնակավայրի «Սուրխաթ» անվանը, «Սոյխաթ» ձևով, առաջին անգամ հանդիպում ենք XIII դարի 40—50-ականների աղբյուրներում, մասնավորապես «Սելջուկ նամե» քրոնիկում[21], Մ. Կրամարովսկու վկայությամբ հրեական աղբյուրներում այս անվան ավելի վաղ՝ X—XI դարերի հիշատակումներ կան[22]։ Ուրեմն, եթե քաղաքին կամ բնակավայրին տվել են մերձակա Սուրբ Խաչի անունը և քաղաքն էլ XIII դարի կեսերին արդեն այդ անունով հայտնի էր, նշանակում է Սուրբ Խաչը ևս այդ ժամանակաշրջանում պիտի գոյություն ունենար։ Եվ ոչ միայն գոյություն ունենար, այլև լիներ այնքան համբավավոր, որպեսզի իր անունը տարածեր մերձակա բնակավայրի վրա։

Վերջին շրջանում կատարված հնագիտական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ Սուրբ Խաչ վանքի գավիթը, որը XIV դարի վերջի կառույց է, մասամբ ծածկել է ինչ-որ շինության հետքեր[23]։ Անկասկած, սրանք վանքի նախնական շինությունների մնացորդներից են, որոնց մասին, ցավոք, այսօր դժվար է դատել, բանի որ այս շերտի վրա, գավթից հյուսիս, հետագայում այլ կառույցներ են կանգնեցվել։

Հովհաննես Սեբաստացու շինարարական գործունեության մասին խոսվում է նաև 1694 թ. գրված և Հակոբ Կաֆայեցու գրչին վերագրվող մի բանաստեղծության մեջ.

Կամաւ սուրբ հոգւոյն ոմրն գիտնական,
Յովհաննէս անուն շնորհիւ պետական.
Լեալ նա յաշխարհէն մեծ սեբաստական,
Կանգնեալ հաւատրով զվանքս Սուրբ Նշան.
Ունելով ընդ իւր զփայտն փրկչական,
Եկեալ ի յաշխարհս փառօք մեծական.

---

19 Նույն տեղում, էջ 486։

20 Г. Спасский. Старый Крым.—Записки Одесского общества любителей истории и древностей. Т. 4, с. 100.

21 В. Г. Тизенгаузен. Сборник материалов, относящихся к истории Золотой Орды. Т. II. Извлечения из персидских сочинений. Л., 1941, с. 26.

22 М. Г. Крамаровский. Солхат-Крым: К вопросу о населении и топографии города в XII—XIII вв.—В сб.: Итоги работ археологических экспедиций Государственного Эрмитажа. Л., 1989, с. 143.

23 О. Ломбровский, В. Сидоренко. Солхат и Сурб Хач.—В сб.: Археологические памятники Крыма. Симферополь, 1978, с. 94, 98.

Ամփոփեալ զմասն խնամօք տեառնական,
Վերակառուցեալ գվանքս Սուրբ Նշան[24],

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս շեշտված է Հովհաննես Սեբաստացու կողմից արդեն կանգուն վանքում վերակառուցողական աշխատանքներ կատարած լինելու հանգամանքը։ Հավանաբար, չորրորդ տողում խոսքը գնում է բուն եկեղեցու՝ Սուրբ Նշանի կառուցման, իսկ ութերորդում՝ այդ կառուցման հետևանքով վանքում, բնականաբար, տեղի ունեցած վերակառուցման մասին։ Հարկ է նշել, որ Սուրբ Նշան եկեղեցու կառուցումից հետո ողջ վանքը սկսում են կոչել այդ անունով։ Մասնավորապես, այդ անունով է այն հանդես գալիս XVII դարի հիշատակարանների և վիմագիր արձանագրությունների մեծ մասում։ Դրանցում հատկապես գերակշռում է «Ղրիմու սուրբ Նշան» ձևը։ Այն, որ Սուրբ Խաչը և Սուրբ Նշանը միևնույն հուշարձանն է, ապացուցում են իրենք՝ հիշատակարանները և վանական շինությունների պատերին փորագրված տասնյակ վիմագրությունները, որոնցում մանրի երկու անունները էլ հանդիպում են։ Կասկածից դուրս է, որ հուշարձանի հնագույն անունը Սուրբ Խաչ է։ Սուրբ Նշան անունը, որպես ընդհանուր վանքի անուն, շրջանառության մեջ է մտնում միայն համանուն եկեղեցու՝ տեղի միակ հոգևոր շինության կառուցումից հետո։ Սա հասկանալի է։ Այդ դեպքում որտեղի՞ց է առաջացել Սուրբ Խաչ անունը։ Որոշ դեպքերում Սուրբ Նշան հասկացությունը խորհրդանշում է հենց խաչը։ Սակայն սուն պարագայում եկեղեցին անվանակոչողները ոչ թե խաչն են ի նկատի ունեցել, այլ խաչակիր դառան բարձրարանդակ խորհրդանշանը, որին հանդիպում ենք եկեղեցու երեք նարևորագույն նիստերում՝ շքամուտքի վրա, խորանի և գմբեթի առաստաղի կենտրոնում[25]։ Սուրբ Նշան եկեղեցին փաստորեն կառուցվել է որպես «զենսրուսն գառինն անմահի»։ Հաղթանակած Քրիստոսին խորհրդանշող այս պատկերը, որի կիրառումը արգելվել է X դարի Տրուլլի տիեզերաժողովի կողմից, հաճախ է հանդիպում Ղրիմի հայկական, ինչպես նաև ջենովական հոգևոր կառույցներում։ Կիլիկյան Հայաստանում այս խորհրդանշանը կիրառվել է պետական մակարդակով։ Վկան՝ դրա առկայությունը Լևոն II-ի ժամանակաշրջանի դրամների վրա[26]։ Հենց այն հանգամանքը, որ վանքը և այդ վանքում եղած միակ սլաշտամունքային կառույցը կոչել և այժմ էլ կոչում են տարբեր անուններով, խոսում է այն մասին, որ տաճարի հիմնադրումը պետք է դիտել ոչ թե որպես Սուրբ Խաչի պատմության ելակետ, այլ մի նոր փուլի սկիզբ։ Հաստատապես կարելի է ասել, որ վանքում ժամանակին գոյություն է ունեցել Սուրբ Խաչ անունով ինչ-որ սրբություն, որն էլ իր անունն է տվել վանքին։

1778 թ. ռուսական կառավարությունը կազմակերպեց քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի և հույների արտագաղթեցումը Ղրիմից։ Հայերը գաղթելիս իրենց հետ Ղրիմից տարան ինչպես անձնական գույքն ու արժեքները, այնպես էլ եկեղեցական կահկարասին, գրքերը, սրբությունները։ Հաստատվելով Դոնի մերձափնյա տափաստաններում, նրանք հիմնեցին նոր Նախիջևան քաղաքը շրջակա հինգ գյուղերով հանդերձ։ Ղրիմյան յուրաքանչյուր եկեղեցու անունով այստեղ մի նոր եկեղեցի հիմնադրվեց և նախորդի ունեցվածքը տրվեց նույնանուն նորակառույցին[27]։ Հայտնի է նաև, որ այս գաղթի ժամանակ հայերն իրենց հետ Ղրիմից տարան Սուրբ Խաչ անունով հնագույն մի խաչքար, որը, համաձայն ավանդության, բերված էր եղել Հայաստանից առաջին

---

24 Մ. Բժշկյան. նշվ. աշխ., էջ 347։

25 Տ. Է. Սարգսյան, Մ. Վ. Պետրոսյան. Սուրբ Խաչ. Սիմֆերոպոլ, 1998, էջ 35։

26 А. Л. Якобсон. Указ. соч., с. 178; А. Л. Якобсон, Ю. А. Таманян. Указ. соч., с. 16.

27 Դավթար ի Ղրիմու բերեալ եկեղեցական անօթիցն արծաթեղինաց և շորեղինաց.—Դիւան հայոց պատմութեան. գիրք Թ. Թիֆլիս, 1911, էջ 11—13։

վերաբնակների կողմից և դարեր շարունակ պահվել էր Սուրբ Խաչ վանքում[28]։ Նոր տեղում խաչքարը տեղադրվեց նորակառույց Սուրբ Խաչ վանքում, որը, համաձայն Եր. Շահազիզի տեղեկության, իր անունը ստացել էր ի հիշատակ Ղրիմյան վանքի[29]։ Իր հաջորդ աշխատության մեջ Շահազիզը գրում է, թե Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի ամենամեծ սրբությունը ոսկեզօծ ապակեպատ շրջանակի մեջ պահվող խաչքարն է, «որ և ծառայել է իբրև հիմք շինության և անվանակոչության» վանքի[30]։ Երկու տեղեկություններն էլ ճիշտ են և փոխկապակցված։ Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքը իր անունը ստացել է ինչպես այնտեղ պահվող գլխավոր սրբությունից, այնպես էլ ի հիշատակ Ղրիմյան վանքի։ Ուրեմն, եթե Նոր Նախիջևանի վանքը իր անունը ստացել է խաչքարից, պետք է եզրակացնել, որ նույն խաչքարի անունով է կոչվել նաև Ղրիմի վանքը։ Դատելով այն բանից, թե ինչպես են հայերը վերաբերվել Սուրբ Խաչ կոթողին, ինչպես են երկու դարերի ծանրագույն պայմաններում իրենց հետ վերցրել այս ծանր բեռը, կարելի է պատկերացնել դրա նշանակությունը մեր ժողովրդի համար։ Հաստատապես կարելի է ասել, որ հենց այս սրբության անունով է կոչվել ինչպես Ղրիմյան վանքը, այնպես էլ մոտակա բնակավայրը։ Թե ինչպես են կոչել իրենց բնակավայրը իրենք հայերը՝ դժվար է ասել, բայց շրջակա բնակչությունը այն գիտել է որպես մի վայր, որտեղ ապրել են մարդիկ, որոնք բերել և պաշտել են Սուրբ Խաչ, իրենց արտասանությամբ՝ Սուրխաթ, Սոլխաթ սրբությունը։ Մ. Բժշկյանը նույն խաչքարը, արդեն «Փրկչաքար» անվամբ, տեղադրում է Բախչեյի գյուղի մոտ գտնվող Փրկչի վանքում[31]։ Բժշկյանը խաչքարը չի տեսել։ Նրա այցելության ժամանակ այն արդեն տեղափոխված է եղել, սակայն Հ. Առաքելյանի «Դամ-Թաղի» այն տեղեկությունը, որ նորակառույց վանքը օծվել է «յանուն Փրկչին և Սուրբ Խաչին»[32], հաստատում է խաչքարի կապը նաև Փրկչի վանքի հետ։ Հավանականորեն, խաչքարը Փրկչի վանք է տեղափոխվել XVIII դարում Սուրբ Խաչում տեղի ունեցած ավերիչ հրդեհի պատճառով, ինչի մասին վկայում են հնագիտական ուսումնասիրությունները[33]։ Այս առումով կարևոր է նաև Ռ. Պատկանյանի այն տեղեկությունը, թե ղրիմահայերն Անիից բերված նույնանման երկու խաչքար են տեղափոխել Նոր Նախիջևան։ Դրանցից մեկը մնացել է տեղում՝ Սուրբ Խաչ վանքում, իսկ մյուսը տեղափոխվել է Պետերբուրգի կայսերական թանգարան[34]։ Խաչքարը մինչև 1922 թ. պահվել է Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքում, այնուհետև տեղափոխվել է տեղի Սուրբ Կարապետ եկեղեցի[35]։ Այժմ հուշարձանը գտնվում է իր նախկին տեղում՝ Դոնի-Ռոստով քաղաքի Սուրբ Խաչ վանքում, որտեղ բացվել է Ռուս-հայկական բարեկամության թանգարան[36]։ Խաչքարը քանդակված է հրաբխային բազալտի վրա, ինչը բացառում է դրա ղրիմյան ծագումը։ Նեղ, երկարավուն ստելայի դիմային երեսին պատկերված են երկու խաչեր։ Ստորինը խոշոր, շատ կարճ հորիզոնական թևերով պարզ խաչ է։ Վերին խաչը ծայրերում լայնացող հավասար թևեր ունի և առնված է կլոր շրջանակի մեջ։ Պաշտել են

---

[28] С. Хачикян. Хачкар Сурб Хач вновь в Сурб Хаче.—«Һ»амайнк (Историко-филологический журнал, вып 6, Пятигорск, 1997, с. 28.

[29] Եր. Շահազիզ. Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը. Թիֆլիս, 1901, էջ 7։

[30] Եր. Շահազիզ. Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք. Թիֆլիս, 1903, էջ 72։

[31] Մ. Բժշկյան. Նշվ. աշխ., էջ 290։

[32] Դաւթար ի Ղրիմու բերեալ եկեղեցական անօթից արծաթեղինաց և շորեղինաց.—Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, էջ 11։

[33] О. Домбровский, В. Сидоренко. Указ. соч., с. 99.

[34] Ռ. Պատկանյան. Նոր-Նախիջևանի հիմնարկութեան պատմութիւնը. Թիֆլիս, 1879, էջ 61—62։

[35] О. Х. Халпахчьян. Архитектура Нахичевани-на-Дону. Ереван, 1988, с. 90, 92

[36] С. Хачикян. Указ. соч., с. 28.

վերին՝ շրջանակի մեջ առնված խաչը, որի կրկնօրինակները քանդակված են նաև ղրիմյան վանքի շինությունների պատերին։ Ուշագրավ է այն, որ միջնադարյան աղբյուրներում ևս խոսվում է Սուրխաթին մոտ գտնվող ինչ-որ կենսակիր խաչի մասին։ 1374 թ. հիշատակարանի հեղինակ Սարկոսը ասում է, թե ձեռագրի երկրորդ մասը գրել է Սուրխաթում, «առ ոտս սուրբ ձողաբարձ կենսակիր խաչին Քրիստոսի»[37]։ Պարզ է, որ Սարկոսը ի նկատի ունի Սուրբ Խաչ վանքը։ Խաչը, որի մասին նա խոսում է, կանգնեցված է ինչ-որ երկարավուն հենարանի վրա։ Կարծում ենք, որ հեղինակը խոսում է հենց ստորին, ձող հիշեցնող խաչի վերևում քանդակված շրջանակված խաչի մասին։

Սուրբ Խաչ վանքով հիացել են ինչպես հայերը, այնպես էլ օտարազգիները։ XVII դարի 30-ականների Կաֆայի և Թաթարստանի կաթոլիկ պրեֆեկտ Ասկոլին վանքի տաճարը, նույնիսկ, որակել է որպես Հռոմին արժանի կառույց[38]։ 1694 թ. գրված և արդեն հատվածաբար բերված գովք-բանաստեղծության հեղինակը ևս շեշտում է օտարների բացառիկ վերաբերմունքը հայոց վանքի հանդեպ.

Ծանկան, փափագին ազինք ամենայն,
Մինչեւ այլ ազգիք առ ոտը քո գան.
Մողա եւ Պարոն համ Սուլդան եւ խան,
Հիացեալ հային հիմանդ Սուրբ Նշան[39]։

Սակայն կրկին վերադառնանք Սուրբ Նշան եկեղեցու կառուցման ակունքներին։ Իրողությանը չի համապատասխանում Մ. Բժշկյանի աշխատության մեջ եղած այն նշումը, թե Սեբաստացին Գևորգ անունով եղբայր է ունեցել։ Տաճարի կառուցմանը մասնակցել է նրա կրտսեր եղբայր Ղազարը, որը շինարարության ավարտից քիչ անց վախճանվել է և թաղվել վանքի կամարների տակ. «...մանաւանդ զհարազատ եղբայր տէր Յովհաննիսի՝ զսիրելին եւ զհամակ արի զՂազար յիշեսջիք և Քրիստոս, որ յամս յայս *(1368 թ.—Տ. Ս.)* փոխեցաւ առ տէր... և թաղեցաւ պատուական մարմին նորա ընդ հովանեաւ նորաշէն սրբոյ տաճարին Սուրբ Նշանին, որում և բազում էր աշխատեալ նոյն ինքն Ղազարն, ի կանգնումն նորին տաճարի»[40]։

Բերված հիշատակարանի մեծագույն արժեքը նաև նրանում է, որ այստեղից տեղեկանում ենք, թե տաճարի շինարարությունը, որ սկսվել էր դեռևս 1358 թ., 1368-ին արդեն եղել է ավարտված։ 1362 և 1363 թթ. գրված հիշատակարաններն էլ մատնանշում են Հովհաննես աթոռակալի մյուս եղբորը՝ Հակոբին, որը հմուտ վաճառական լինելով՝ հավանաբար ֆինանսական աջակցություն է ցուցաբերել եկեղեցու կառուցմանը. «...յիշեսջիք զվերագրեալ տէր Յոհանէս, և զծնաւղսն..., և զպատուելի եղբարսն իւր՝ զիմաստուն վաճառականն զպարոն Յակոբն և զՂազարոս գրամարտիկ»...[41]։

Եվ այսպես, պարզվում է հետևյալ իրողությունը. 1358 թ. Ղրիմի Սուրբ Խաչ վանքում սկսվել են հոգևոր առաջնորդ Հովհաննես Սեբաստացու նախաձեռնած Սուրբ Նշան տաճարի կառուցման աշխատանքները և ավարտվել մինչև 1368 թ.։ Այս աշխատանքներին անմիջականորեն մասնակցել և նյութական աջակցություն են ցուցաբերել առաջնորդի եղբայրները՝ վաճառական Հակոբը և հոգևորական Ղազարոսը։ Վերջինս տաճարի կառուցումից քիչ անց վախճանվել է և թաղվել վանքում։

---

37 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 513—514։

38 Эмиддио Дортелли д'Асколи префекта Кафы, Татарии и пр. 1634 г. Описание Черного моря и Татарии)—ЗООИД, т. 24, II, 1902, с. 125; Վ. Ա. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, էջ 322։

39 Մ. Բժշկյան. նշվ. աշխ., էջ 348։

40 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 486—487։

41 Նույն տեղում, էջ 456։

«Վանքը նման է ավելի շուտ ահեղ ամրոցի, քան խաղաղ մենաստանի»[42]։ Հիմնական կառույցները ներփակված են մեկ ընդհանուր համակարգի մեջ, որի աչքի ընկնող մասը, բնականաբար, զբաղեցնում են եկեղեցին և գավիթը։ Սուրբ Նշանը կենտրոնագմբեթ, արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ՝ խաչաձև կառույց է։ XIV դարի երկրորդ կեսին դրան արևմուտքից կցվել է գավիթը։ Սա զույգ կենտրոնական մույթերով, երկթեք տանիքով, արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ՝ եռանավ, թաղակապ կառույց է, որի վրա, հարավ-արևելյան անկյունում բարձրանում է ուղղանկյուն կտրվածք ունեցող պիտաշտարակը։ 1980 թ. Վ. Սիդորենկոյի գլխավորած հնագիտական արշավախմբի կողմից հայտնաբերվեց գավթի հնագույն արձանագրությունը, փորագրված 1401 թ.[43]։ Այս հանգամանքը թույլ է տալիս գավթի կառուցումը տեղադրել 1368—1401 թթ. միջև։ 1368 թ. ընդունվել է որպես այս ժամանակահատվածի ստորին սահման, որովհետև անհավանական է, որ արդեն գոյություն ունեցող գավիթը չհիշատակվեր վանքի 1368 թ. մասնակի նկարագրության մեջ։

Գավթի արևմտյան կողմում տարածվում է մեծ կամ կենտրոնական ներքին բակը, որը արևմուտքից սահմանափակվում է սեղանատան երկսրահ կառույցով։ Երկու սրահներն էլ եռանավ, թաղակապ կառուցվածք են ունեցել։ Դրանցից հարավայինը բազմաթիվ փոփոխություններ է կրել և միայն վերջին վերականգնողական աշխատանքների արդյունքում է սկսել ստանալ նախնական տեսքը։ Հ. Խալփախչյանը, հղելով XIV դարի մի հիշատակարան, ենթադրում է, թե Սուրբ Խաչի սեղանատունը կառուցվել է 1375 թ. ոմն Հակոբի կողմից[44]։ Կարծում ենք, ի նկատի ունի հետևյալ հիշատակարանը. «Յամի ծննդեան տեառն և փրկչին ՌՅՀԷ (1377 թ., իսկ ներկայիս թվականությամբ 1375 թ.) եւ ի յամսեան սեպտեմբերին, կատարեցաւ շինուածս Սուրբ Խաչ, ի տօնի վերջին. ֆրա Յակոբ աղքատ հոգին, ի միաբանողաց եղբարց կարգին, ձեռնտուութեամբ եղբարց կարգին, շինեցի զսեղանատունս եւ զտօրմիթօրս* վասն միաբանողաց եղբարցս կարգին»[45]։ Սակայն, Ֆրա Հակոբը լինելով Կաֆայի Սուրբ Նիկոլայոս հայկական կաթոլիկ եկեղեցու հիմնադիրը և սպասավորներից մեկը՝ այս շինությունները՝ սեղանատունը և ննջարանները, կառուցել է հենց այդ եկեղեցուն կից[46], մինչդեռ Սուրբ Խաչը երբևէ կապ չի ունեցել կաթոլիկների հետ։ Բերված հիշատակարանում խոսքը գնում է ոչ թե Սուրբ Խաչ վանքի, այլ Սուրբ Խաչի սեպտեմբերյան տոնի՝ Խաչվերացի մասին, որի տոնակատարության օրը (ամսաթիվը) վիճահարույց էր Կաֆայի քրիստոնյաների շրջանում։ Ինչ վերաբերում է Սուրբ Խաչի սեղանատանը, ապա վանքի ընդհանուր կառուցվածքից ելնելով, այն կարելի է վերագրել XV դարի սկզբներին։

Սուրբ Խաչը բազմիցս նորոգվել է, վերակառուցվել։ 1694 թ. հոգևոր առաջնորդ Հակոբ արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ վանքի հարավային կողմում մենաստան է կառուցվում[47]։ Այն իրենից ներկայացնում է փոքր ներքին բակը շրջափակող ծնկաձև երկհարկ շինություն։ Մենաստանը վանքի հիմնական մասից անջատված է բարձր միջնապատով։ 1751 թ. Սուրբ Խաչն ամբողջությամբ վերանորոգվում է[48], իսկ 1778 թ. բռնագաղթից հետո՝ բար-

42 Г. Спасский. Указ. соч., с. 101.

43 Крымский филиал Института археологии АН Украины. Отчет В. Сидоренко о проведенных в 1980 году археологических раскопках на территории монастыря Сурб Хач.

44 О. Халпахчьян. Архитектурный ансамбль Сурб-Хач в Крыму. «Сурб-Хач», № 2, Симферополь, 1996, с. 11.

* Ի նկատի ունի dormitorius (լատ.)—ննջարանների շենք։

45 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 517։

46 Նույն տեղում, էջ 517, 371։

47 Տ. Է. Սարգսյան, Մ Վ. Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 21—22, 39—40։

48 Նույն տեղում, էջ 23, 39։

ձիթողի մատնվում։ 1795 թ. արքեպիսկոպոս Հովսեփ Արղության-Երկայնաբազուկը, անհանգստացած վանքի վիճակով, դիմում է Մոսկվայի հայությանը, խնդրելով աջակցել վանքի նորոգությանը և կահավորմանը[49]։ Նախապես նա արդեն Նախիջևանից և Աստրախանից սպասք և հանդերձ էր ձեռք բերել և ուղարկել Սուրբ Խաչ, նախաձեռնել էր նաև շինարարական աշխատանքներ. «որև նորոգել եւու գխախտեալ տեղինս, շինեցուցի անդ զառաջնորդարանս, զխուցս և զտունս յաղագս միաբանից և ուխտաւորաց»[50]։ Հավանաբար, խոսքը սեղանատան վրա կանգնեցված վերնահարկի և պարսպապատերից դուրս գտնվող հյուրատան մասին է։ Առաջինը, համաձայն հնագույն լուսանկարների ընձեռած տվյալների, դեպի հարավ նայող փայտաշեն պատշգամբով սենյակների բաժանված կառույց է եղել, որը XX դարի սկզբին քանդվել է։ Նրա տեղում նույն դարի 30-ականներին նոր շինություն է կանգնեցվել, որի ավերակները մինչև օրս էլ կանգուն են։ Այս կառույցի հետհեղափոխական ծագման մասին են վկայում պատերի լիցքի մեջ օգտագործված անխղճորեն կոտրատված խաչքարի բեկորները։ Արղությանի հիմնած երկրորդ շինությունը՝ հյուրատունը ևս չի հասել մեզ։ Նրա տեղում ներկայումս կանգնած է 1960-ականներին կառուցված, նույն նշանակությամբ կիրառվող մի շինություն, որի արտաքին հարդարանքի մի քանի տարրերն են միայն հիշեցնում նախկինը։ 1800 թ., արդեն հայոց կաթողիկոսությունը ստանձնած Արղությանը դիմում է Սուրբ Խաչի վանահայր Ղազար վարդապետին. «Այժմ հեշտ է վասն Քոյ և արդիւնաւոր պատճառն՝ որ տեղերն որւան որ չափեցեալ եղև մինչև յՕթուզգու ճանապարհն՝ անապատն ևս ի մէջ նորա, մեր է և պարտիս սոր չափել և պլանն տալ Ճեզ... Յանձնեմ Ճեզ և Սուդաղու այգին, ուպէս սայէ վանքդ...»[51]։ Սրանից զատ վանքը հողեր է ունեցել նաև շրջակայքում, Պերեկոպի գավառում և այլուր[52]։ XIX դարի վերջին Խորեն Ստեփանեի կողմից հայտնաբերված մի վիմագիր սալ վկայում է, որ 1830-ականներին վանքում վերանորոգման աշխատանքներ է ծավալել վարդապետ Մանվել Գյումուշխանեցին[53], որը Սուրբ Խաչում է գտնվել առգրավված վանքապատկան հողերը ետ վերցնելու հանձնարարականով[54]։ Արձանագրությունից պարզ է դառնում, որ վանքի ներքին աղբյուրը կառուցվել է հենց այս նորոգությանընթացքում։ Հ. Սուրխաթյանը ևս խոսում է Գյումուշխանեցու օրոք վանքում կառուցված աղբյուրի մասին[55]։

Սուրբ Խաչում լուրջ շինարարական աշխատանքներ են ծավալվում 1890-ականներին՝ վարդապետ Խորեն Ստեփանեի նախաձեռնությամբ[56]։ Սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո Ղրիմի կառավարական մարմինները առաջարկում են քանդել վանքը և օգտագործել շինանյութը[57]։ Հուշարձանների պահպանությամբ զբաղվող մարմիններին մի կերպ հաջողվում է համոզել իշխանություններին, որ վանքը պատմական մեծ արժեք չ ներկայացնում, բարվոք վիճակում է և կարող է օգտագործվել այլ նպատակ-

---

49 Կոնդակ Յովսեփ արքեպիսկոպոսի ի վերայ հասարակութեանն դրեցաք ի Մոսկով յաղագս Ղռիմու Ս. Խաչ վանից պայծառութեան.—Դիւան հայոց պատմութեան. գիրք Ք, էջ 155—156։

50 Նույն տեղում։

51 Յովսեփ կաթողիկոսի անդրանիկ կոնդակը Ղազար վարդապետին.—Դիւան հայոց պատմութեան, գիրք Ք, էջ 334—335։

52 Խ. վ ր դ. Ս տ ե փ ա ն ե. Ղրիմի Սուրբ Խաչ վանք. Ս. Պետերբուրգ, 1891, էջ 36; Վ. Ա. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801—1917). Երևան, 1970, էջ 138—149։

53 Խ. վրդ. Ս տ ե փ ա ն ե. Նշվ. աշխ., էջ 9։

54 Վ. Ա. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. Ղրիմահայոց պատմություն, էջ 281—283։

55 Հ. Ս ո ւ ր խ ա թ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 73։

56 Խ. վրդ. Ս տ ե փ ա ն ե. Նշվ. աշխ.։

57 Центральный Государственный Архив Крыма, Ф. Р—663, оп. 10, д. 41, л. 31.

ներով[58]։ Հետհեղափոխական շրջանի արխիվային փաստաթղթերը մեզ են հասցրել վանքի անշարժ գույքի ցուցակը՝ ուշագրավ նկարագրություններով հանդերձ[59]։ Սրանք, մասնավորապես, հաստատում են, որ մենաստանի շենքի երկրորդ հարկը բակի կողմից փայտե սյուների վրա հենվող տախտակամած է ունեցել։ Ուշագրավ է նաև հյուսիսային նախնական շենքի արտաքին տեսքի և կոնստրուկցիայի նկարագրությունը։ Նույն փաստաթղթերը վկայում են, որ վանքի բոլոր արժեքները, բացառությամբ արծաթե խաչի և խույրի, գողացված են եղել[60]։ 1930-ականներին վանքի տարածքում պիոներական ճամբար է բացվել, ինչի առիթով էլ վերականգնվել են բնակելի շինությունները։ 1941—45 թթ. պատերազմի ընթացքում Սուրբ Խաչը խիստ վնասվել է։ Ավերվել են մենաստանի շենքը և պարսպապատերից դուրս գտնվող դամբարանը[61]։ Բարեբախտաբար, հիմնական կառույցներն անխաթար են մնացել։ XX դարի 60—70-ականներին վանքի տարածքում կատարվել են հնագիտական պեղումներ և մասնակի նորոգումներ։ 1993 թ. Սուրբ Խաչում սկսվել են կանոնավոր վերականգնողական աշխատանքներ, որոնք մինչև օրս էլ շարունակվում են։

Վանքի շինությունների պատերին բազմաթիվ վիմագիր արձանագրություններ կան։ Դրանց հիմնական մասը տարբեր առիթներով արված խաչաքանդակներին հարակից հիշատակագրություններ են։ Շատ են նաև վանքի ուխտավորների թողած հիշատակարանները։ Արձանագրությունները գրված են ինչպես սվաղի վրա, այնպես էլ շինությունների սրբատաշ հատվածներին։ Մեծ քանակությամբ վիմագրություններ կան տաճարի շքամուտքին։ Սրանք ժամանակին շքամուտքի հետ մեկտեղ սվաղվել, սպիտակեցվել են, ինչի առիթով դեռևս XIX դարի 90-ականներին իր դժգոհությունն է արտահայտել Խորեն Ստեփանեն. «Դրան երկու կողմում մարմարյա սյուներ կան հնագույն զարդերով, բայց թե որ անգետ վանահոր օրով թանձր կրով ծեփած են այս հնության հիշատակարաններն՝ չդիտեմ»[62]։ Ինքը՝ Խորեն Ստեփանեն, մաքրել է շքամուտքին փորագրված մի քանի խաչաքանդակներ և արձանագրություններ։ Վ. Սիդորենկոյի գլխավորած հնագիտական պեղումների ընթացքում շարունակվել են շքամուտքի մաքրման աշխատանքները և հայտնաբերվել են մի քանի չափազանց ուշագրավ հիշատակարաններ։ 1995 թ. սվաղից ազատվել է շքամուտքի մեծ մասը, բացվել են մինչև օրս անհայտ մի քանի արձանագրություններ, սակայն փորվածքների մեջ դեռևս տեղ-տեղ պահպանված սվաղի կարծր հատվածները խոչընդոտում են վիմագրերի ընթերցմանը, իսկ երբեմն էլ պարզապես անհնարին են դարձնում այդ աշխատանքը։ XIX դարում Ղրիմ այցելած հայ հոգևորականները և ճանապարհորդները Սուրբ Խաչ վանքում տեսել և գրի են առել վիմագրեր, որոնք ներկայումս գոյություն չունեն։ Չեն պահպանվել Հարություն Սուրխաթյանի նկարագրած գավթի առջև, արևմտյան մուտքից հյուսիս տեղադրված երեք արձանագիր տապանաքարերը, այդ թվում և ականավոր հոգևորական, վարդապետ Մանվել Գյումուշխանեցու գերեզմանաքարը[63]։ Անհետ կորել են նաև վանքի երկու բակերը միմյանցից բաժանող պատին և գավթի պատերին ներքուստ ագուցված արձանագիր խաչքարերը, ինչպես նաև բազմաթիվ այսօրինակ այլ հուշարձաններ։ Բարեբախտաբար սրանց մի մասը ժամանակին հրատարակվել է և այդ կերպ հասել մեզ։ Տաճարի և գավթի պատերի սվաղը բազմիցս նորոգվել է և թարմացվել, որի պատճառով էլ կորսվել են սվաղի ստորին շերտերին փորագրված

58 Նույն տեղում, թ. 32։

59 Նույն տեղում, թ. 6, 17։

60 Նույն տեղում, թ. 10։

61 А. Л. Якобсон. Средневековый Крым. Очерки истории и материальной культуры. М.—Л., 1964, с. 173, прим. 95.

62 Խ. վրդ. Ստեփանե. Նշվ. աշխ., էջ 11։

63 Հ. Սուրխաթյան. Նշվ. աշխ., էջ 72—73։

1.

2. Ես տր գրիգործառպ
սբ խաչին եկիերպագու
ր ի թվ ռնդ իսէմտէմբեր
իա էապրի
եղ է

3. Ես յակոբ կաթ
ողիկոսդ ւ աթոռսի
եկի երկ գթ կրի
սբ նշանիս իթվ զա
ի շ։ սկ նաթ։

4.
Եգր խ[illegible]որ Յ[illegible] սբ խաչին
եկե երկրպագուրի նշանիս
վ։ ոդ նոս թվին ռնդ

5.
ԵՍԻԱՉՔՈԴԼ
ՊԻ[illegible]ԱՍՆՑԻ
Ե[illegible]ՐԿՐՊԱԳ
ՈՒԹԻՒՆԱՐԻ
ՍԲ[illegible]ՉԻՆ։ԻԹՎ
ՉՇԵ

6.
թվ ՉԹ
ՅՈՎԱՆՆԷՍ

7. Եսլէոն էկաւ
սբ խն
թվ ռԺգ

8. Եսդ
ցա՛յ։ սբ խ
ա չի ՀԷկի
երկՐՈՍ[illegible]Ր
թվ ռչ

9.
ՍԲԻԱՉՍԱՑԱԻՆ
ԲԱՀԷՍԷ ՍԲ[illegible]
Ր[illegible]Ն ՉՇԸ

10.
[illegible]Ն գիսեդ էվ
որ էմանյէ սր
գրիգր ռվ ռՉԹԸ

11. ղազարոս սբ խաչն

I2.



I3.



I4.



I5.



I6.



I7.



I8.



I9.



հնագույն արձանագրությունները։ Հիշատակագրություններ են եղել նաև վանքում պահվող եկեղեցական սպասքի վրա, որի պահպանված մի քանի նմուշների ցուցակը, փորագրություններով հանդերձ, ներկայացնում է Խորեն Ստեփանեն[64]։

1996 թ. լույս տեսավ «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի VII պրակը, որի կազմող Գր. Գրիգորյանը ամփոփել է Ուկրաինայի և Մոլդովայի տարածքում եղած հայկական վիմագիր արձանագրությունները։ Այս աշխատության մեջ տեղ են գտել Սուրբ Խաչ վանքի շուրջ 15 վիմագրեր, ներառյալ նաև չորս կարևորագույն շինարարական արձանագրությունները։ Սրանցից բացի, պրակում տեղ են գտել նաև վանքի վերը հիշատակված արդեն կորսըված արձանագրությունները (բացառությամբ Հ. Սուրխաթյանի հրատարակածների), ինչպես նաև Խորեն Ստեփանեի գրքում բերված եկեղեցական սպասքի վրա եղած արձանագրությունները[65]։

Ստորև բերված վիմագրությունները հայտնաբերվել են 1994—97 թթ. և հրատարակվում են առաջին անգամ։

1. Եկեղեցում, հյուսիս-արևելյան խորանի դիմաց, գմբեթատակ հենապատի սրբատաշ հատվածում. չափերը՝ 60×20 սմ։

Թվ[ին]ՋՀ (1521)։

2. Եկեղեցու կենտրոնական խորանից հյուսիս-արևելյանը տանող մուտքի ձախ կողմում, սվաղի վրա.

Ես՝ տ[է]ր Գրիգոր, ծառայ/ ս[ուր]բ խաչին, եկի երկ[րպա]գ[ու] թի[ան] Թվ[ին] ռՀդ (1625) ի սէպտեմբեր/իա (25) է(7) աւրի/ եղէ։

3. Նույն մուտքի կամարի վերևում, ձախից.

Ես՝ Յակոբ Կաֆ[ե]ցի, որդ[ի] [Մ]աթ[ե]ոսի, եկի երկ[րպա]գ[ու]թ[իւն] արի Ս[ուր]բ Նշանիս ի Թվ[ին]ՋՁ (1452)./ /իշատաք....։

4. Նույն մուտքի մեջ, աջից.

Ե[ս]՝ տ[է]ր Խ[աչատ]ուր, ծ[առայ] ս[ուր]բ խաչին,/ եկե երկրպագութի[ան] Նշանիս,/.....թվին ռՀդ (1625)։

5. Եկեղեցու շքամուտքին աջից, վերևում.

Ես Խաչքոդ....// պի.....ասինցի/ ե[կի ե]րկրպագ/ութիւն արի/ Ս[ուր]բ [Խ][ա]չին։ Ի թվ[ին]/ՋՂԵ (1546)։

6. Նախորդից քիչ ներքև, մակերեսային փորագրությամբ.

Թվ[ին] ՋԹ (1460)/ Յովաննէս։

7. Շքամուտքի աջ կողմում, խաչաքանդակի տակ փորագրված արձանագրությունից ներքև.

Ես՝ Լէոն էկա ի/Ս[ուր]բ Խ[աչ]ն./ Թվ[ին] ռԺգ (1564)։

8. Տաճարի հարավ-արևմտյան լուսամուտի շրջանակին, արտաքուստ.

Ես՝ Դէմիր,/ ծառ[ա]յ ս[ուր]բ խ/աչին, եկի/ երկրր[պ]ագու[թ]/[եան] Թվ[ին] ռզ (1557)։

9. Արևելյան պատի ճակատոնին, արտաքուստ ագուցված խաչքարին, ելնդագիր.

Ս[ուր]բ խաչս ա[ստուա]ծային*/բարէխ[աւ]ս է Սմբ.../ Թ[վ][ին] ՋՂԸ (1347)։

10. Գավթում, արևմտյան մուտքի մեջ, ձախակողմյան պատին, սվաղի վրա.

[Ես՝ Մե]լգիսեդէկ,/ որ էմ այժմ տ[է]ր/ Գրիգ[ո]ր, Թվ[ին] ռՃԽԸ (1699)*։

*Արձանագրության սկզբնամասը եղծված է։

11. Գավթի արևմտյան պատին ներքուստ, մուտքից հյուսիս, փորագիր.

Ղազար Ս[ուր]բխաչ*։

*Արձանագրությունն անավարտ է։

---

64 Խ. վրդ. Ս տ ե փ ա ն ե. նշվ. աշխ., էջ 14—18։

65 Դիվան հայ վիմագրության, պրակ VII. Երևան, 1996, էջ 101—111։

12. Գավթի հյուսիսային սյան հարավային երեսին, խաչապատկերների տակ փորագիր.

Ս[ուրբ] Նշանս բար[եխ]ա[ւ]սէ Իշխ[ա]նի կենակցի[ն]՝ Շնո[ֆ]որ տիկնիս, եկու....., /թվ[ին] պհզ (1427)*։

* Իշխանի և Շնոֆորի անունները հանդիպում են նաև 1375 թվին գրված մի հիշատակարանում[66]։

13. Նախորդ արձանագրությունից ցած, ծածկագիր.

Պետրոս. թվ[ին] ջղ (1541)։

14. Հարավային սյան հյուսիսային երեսին, ձախակողմյան խաչապատկերի հորինվածքում.

թվ[ին] ջը (1459)։

15. Եկեղեցու շքամուտքի ձախ կողմում, կամարը կրող որմնասյան վրա, վեց փորագիր խաչերի տակ.

Ս[ուրբ]/Սարգի[ս], Ս[ուրբ]/Կարա[պետ], Ս[ուրբ] Նշան, Ս[ուրբ]/Յակ[ո]բ, Ս[ուրբ] Սիմէոն Ս[ուրբ] Դեորգ։

16. Նախորդից ներքև, գավթի հնագույն՝ 1401 թվի արձանագրության տակ.

Յիշատ[ա]կէ ս[ուրբ] նըշանս Ք[րիստո]սի Ս[ա]ր[գս]ին։ եւ կնոջն Ուաքին։

17. Սեղանատան արևելյան պատի կենտրոնում, կամարի հիմնամասին, 1762 թվի արձանագրության տակ, ելնդագիր.

(Ն)

1810 հոկտենբիրի Սուրբ Խաչ'ի տոն մկրտի...*։

* Արձանագրության "ոչ ամբողջական տեքստը հրատարակված է «Դիվան»-ում[67]։ Վիմագրագետ Ս. Սադումյանի կարծիքով այս արձանագրությունը ընթերցվում է «1810 հոկտէնբիրիս. Խաչատուր Մկրտիչով»։

18. Հին Ղրիմ քաղաքի երկրագիտական թանգարանում՝ Սուրբ Խաչից բերված տապանաքարի անկյունային բեկորի վրա, ելնդագիր.

Այս է տ[ապան.....]/[վար]դապետի.....։

19. Սուրբ Խաչից բերված մեկ այլ բեկորի վրա, ելնդագիր.

[Պետր]ոս վարդապետի որդի/մահտեսի Կարապետին...եզմ...գ (3) տարի մշակութի[ւն]...։

МОНАСТЫРЬ СУРБ ХАЧ КРЫМА И ЕГО НОВОВЫЯВЛЕННЫЕ НАДПИСИ

ТАТЕВИК САРГСЯН

Резюме

Монастырь Сурб Хач находится в 3-х км юго-восточнее города Старый Крым (бывший Сурхат, Крым, Эски Крым). В течение нескольких веков Сурб Хач был престолом армяноапостольской церкви в Крыму. Сохранившееся древнейшее сооружение-церковь Сурб Ншан, основана в 1358 г. духовным предводителем крымских армян иноком Ованесом Себастаци, при содействии его родных братьев: священника Газароса и купца Акоба. Однако средневековые армянские источники, археологические исследования, а таже различия между названиями собственно монастыря и единственного духовного сооружения, находящегося там, говорят о том, что монастырь существовал и до воздвижения церкви. Имеющиеся сведения подтверждают, что монастырь получил свое название от хранящегося здесь хачкара Сурб Хач. Название же Сурб Ншан (св. Знамение) в данном случае обозначает собою символ агнца с лабарумом или агнца крестоносца, рельефное изображение которого размещено в трех главнейших

---

66 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 517—518։

67 Դիվան հայ վիմագրության, պրակ VII, արձ. № 222։

точках церкви: над входом, в конхе алтаря и в центре купольного потолка. В конце XIV века к церкви с запада был пристроен гавит. Двухзальная трапезная,отделенная от церкви и гавита внутренним двориком, построена позднее, по всей вероятности в XV веке. Южная часть монастыря—обитель, согласно надписи, построена в 1694 г. архиепископом Акобом. Кроме названных сооружений на территории памятника имеются три фонтана, лестничная аллея, ведущая к нижнему из них, водные резервуары, укрепленные подпорными стенами рукотворные террасы, служившие в сельскохозяйственных целях и т. д. С 1993 г. на территории монастыря ведутся реставрационные работы. В ходе этих работ в 1994—97 гг. было найдено около 19 эпиграфических надписей, которые впервые публикуются в данной статье.

THE SURB KHATCH MONASTERY OF THE CRIMEA AND ITS NEW-FOUND INSCRIPTIONS

TATEVIK SARGSYAN

Summary

The Surb Khatch (St. Cross) Monastery is one of the bright representations of Armenian Architecture and building-art on the north of the Black Sea. In the course of several centuries it was the residence of the clerical chief of Armenians in the Crimea. The monastery is located 3 km southeast of the settlement of the Old Crimea (Surkhat, the Crimea in the past). The oldest construction here the church Surb Nshan (St. Sign, according to the inscription carved on its cupola, was founded in 1358 by the clerical chief Hovhannes Sebastatsy and his brothers: the merchant Hakob and the clergyman Khazar. In this case the name Surb Nshan (St. Sign) has no connection with St. Cross. It is associated with the sign (picture) of the lamb with a flag, symbolizing the victory of Christ, the relief embleme of which is located on the three most important points of the church: the portal, the altare and the centre of the dome-ceiling. However, the Armenian manuscripts of the second half of the XIV century written in the Crimea, the archeological investigations and the difference between the names of the whole monastery and its single church come to prove that the monastery existed long before the foundation of the church. As for the Monastery, it was named after the stone-cross named Surb Khatch transferred from Armenia and kept here for a long time. At the end of the XIV century a northex (gavit) was annexed to the church from the west. The subsidiary constructions of Surb Khatch date back to the XV century. They are located on the west and separated from the clerical part by a big yard. The southern section of the monastery was disignated for the cloister, represented by a two-storeyed house split into cells, and a small yard. It was built in 1694 by Archbishop Hakob. Since 1993 the Surb Khatch Monastery has been undergoing restoration. During this period 19 unknown inscriptions were found dating from the XV—XVIII centuries. This article is the first publication of the new-found inscriptions.